ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ
Գ Յ Ո Ւ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_____»_____ 2025 **թվականի** N ____ -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» N 72-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   1) որոշման նախաբանում «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» բառերը փոխարինել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» բառերով,
   2) որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
      « 4. Ավտոկայանատեղերի գործունեությունը կազմակերպվում է Գյումրի համայնքի ղեկավարի կամ Գյումրի համայնքի ենթակայության կազմակերպության կողմից:
      1) Ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք գանձում են տուրք՝ Գյումրու քաղաքապետի հետ կնքված պայմանագրին համապատասխան: »
   3) որոշման 5-րդ կետում «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» բառերը փոխարինել «Ավտոտրանսպորտային միջոցների

կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» բառերով,

4) ամբողջ որոշման մեջ «տուրք» բառը և դրա հոլովաձևերը փոխարինել «վճար» բառով և դրա հոլովաձևերով,

5) որոշման նախաբանում «ղեկավարվելով» բառից հետո լրացնել ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի» բառերը,

6) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը (այսուհետ՝ հավելված) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28-րդ և 29-րդ կետերով.

«28. Վարդանանց հրապարակ

29. Խրիմյան Հայրիկ փողոց, ՊԵԿ հյուսիսային մաքսատուն-վարչության հարևանությամբ »:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դ. ՄԱՆՎԵԼՅԱՆ

Կ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Կարգավորման ենթակա խնդրի սահմանումը և առկա իրավիճակը.

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-221-Ն օրենքի վերնագրում, 2021 թվականի հունվարի 20-ին, կատարվել է փոփոխություն, և օրենքը վերանվանվել է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» անվանմամբ: Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել ապահովել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 18-ի N 72-Ա որոշման համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Վերը նշված որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոկայանատեղերի ցանկը անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ հիմք ընդունելով երթևեկության հոսքերի ինտենսիվությունը, ինչպես նաև տվյալ տարածքներում կայանման պահաջարկի գնահատումը:

Կարգավորման նպատակները և ակնկալվող արդյունքը.

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 18-ի N 72-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ապահովել ավտոկայանատեղերի արդյունավետ կազմակերպումը:

Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը.

Սույն որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, որը սահմանում է վարքագծի կանոն՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի: Այն ապահովում է համայնքային իրավական հենք՝ ՀՀ ՇՄ Գյումրի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղերը կազմակերպելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 72-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 18-ի N 72-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում և նվազեցում չի նախատեսվում: